ԺԱ. ՏԱՐԻ 3224 | (Ն. Տ.) 17 ՆՈՅԵՄԲԵՐ 1894 | 5 ՆՈՅԵՄԲԵՐ 1894 | 18 ՃԷՄԱԶԻՒԼ ԷՎՎԷԼ 1312 | ՇԱԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
### Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| Կ. Պոլսոյ համար | Տարեկան | դահեկան արծաթ | 150 |
| » » | Վեցամսեայ | » » | 75 |
| » » | Եռամսեայ | » » | 40 |
| Օտար երկիրներէ | Տարեկան | Ֆրանք | 56 |
| » » | Վեցամսեայ | » | 28 |
| Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր. | Տարեկան | Օսմ. Ոսկի | 2 |
| Գաւառաց թղթատարի ծախքը միօրինակ | | Ղրուշ | 50 |

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues AUX BUREAUX DU JOURNAL

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ԵՂԾՈՒՄ ԵՒ ՅՈՒԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ ՁԱՅՆԻ

Երգիչներէն շատերը յոգնութիւն կը զգան մէկ քանի հատուած երգելէն ետքը։ Եւրոպացի մասնագէտներն այս խնդիրը ուսումնասիրեցին և գտան թէ այն յոգնութիւնը հետեւանք է ոչ թէ շատ երգելու՝ այլ արուեստին կանոնաց անգիտութեան։ Բասթէքս բժիշկն ի Բարիզ երկասիրութիւն մը հրատարակեց որուն մէջ կըսէ թէ «երբ երգիչ մը յոգնի երգելէ, յայտնի է թէ այս ոչ եղծման այլ մանաւանդ ձայնի յուի կիրառութեան հետեւանք է, վասն զի փորձով հաստատուած է որ կանոնաւոր կիրառութեամբ կրնանք ձայնը օգտեցունել երկար ժամանակ առանց յոգնութիւն զգալու»։

Պէտք է հիմա նկատել յուի կիրա-…

ձայնական կարողութիւնները սահմանաւոր են, ինչպէս օբէրէթի թենորներունը. բայց հզօր ձայնի տէր եղող երգիչները դժուարաւ կը համակերպին …

…

…երգողը չկրնայ քաղցրութեամբ արտադրել սուր խազերը, կրնայ քիչ մը քողարկել այն խազերը՝ զայնս բարւոքելու համար։ Այս դարմանէն կրնան օգտուիլ մանաւանդ թենօրները. բայց, ինչպէս ըսինք, պէտք չէ եղծում ընել։

Ե. Վ. ԱՃԷՄԵԱՆ.

## ԾՆՈՂԱՑ ԽՂՃՄՏՈՒԹԻՒՆԸ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՈՐԱՎԷՊ

Երբ իրիկունը պաշտօնատեղիէս կը վերադառնամ տուն, դեռ գլխարկս չը հանած ու վաւաղանս չը տեղաւորած՝ Պօղոսիկը քայլերուս ձայնը ճանչնալով կուգայ վրաս ցատկել և ուսերուս վրայ ելնելով ու բուռն [illegible]աղաղակներով վերադարձս կ'ողջունէ։

—Հայրիկս եկա՜ւ, բարեւ հայր իմ, կը պոռայ։

Պօղոսիկ հինգ տարեկան չարաճճի եւ արթուն տղեկ մ'է որ իր զուարթ աղաղակներովը …

…

Կինս խստորէն ըսաւ ինծի. «Կը յուսամ որ ալ այս անգամ պէտք եղածին պէս պէտի պատժես ասանկ անզգամը։»

Կինս՝ Ալիս կը պնդէ որ յանցանքը իմս է, որ Պօղոսիկը կը շփացնեմ ու շատ երես …

…

պահանջենք իրենց հասակէն աւելի խելացի ըլլալ, որդեօք մենք միշտ խելօք ու անմե՞ղ ենք։ Այս խորհրդածութիւնները ինծի ներշնչեցին Պօղոսիկին մէկ հարցումը զոր օր մը ըրաւ ինծի.

…

պանս կը լեցնեմ ու այնպէս տուն կը դառնամ։

Սանդուխին երեք ոտքը մէկէն առնելով անանկ վեր կ'ելնեմ, տղեկս սենեակին դրանը ետեւէն …

…

նիկս, միւս անօթին ալ կոտրեցի՞ր, հրեշտակս, և գրպանս ունեցած խաղալիկներս բոլորն ալ առջեւը պարպելով, կ'ըսեմ իրեն եռանդով. «Առ աս խաղալիկներն ալ կոտրէ, թափէ, ուզածդ ըրէ, զուարճացի՛ր, վասն զի ալ համոզուեցայ որ ընտանիքի մը երջանկութիւնը կոտրող, թափող ու աղմկալից զաւակներ ունենալ է։

## ԷՄԻԼ ԶՈԼԱ Ի ՀՌՈՄ

Նախորդ շաբթուն Հռոմի Մամլոյ ընկերութեան կողմէն հարիւր հոգինոց սեղան մը տրուեր է ի պատիւ Էմիլ Զոլայի։ Հրաւիրեալներուն մէջ կը գտնուէին եղեր Իտալիոյ հեռագրաց ու թղթատարութեան նախարարը, մէկ ծերակուտական, հինգ երեսփոխան, Հռոմի քաղաքապետին ներկայացուցիչը, և իտալացի ու օտար բազմաթիւ արուեստագէտներ և խմբագիրներ։ Կրթական նախարար Պ. Պաչէլլի հեռագրաւ …

…

## ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (13)

ՌԸՆԷ ՏԸ ՊՕՆ ԺԷ

## ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՆԱՐՄԻՐ—ՄԱՄՈՒՆԸ)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՋՈՒՐԻ ԿԱԹԻԼ ՄԸ

Բազմութեան անյագ հետաքրքրութիւնը մանկամարդ կնոջմէն դարձած էր ամբողջովին կեդրոնանալու համար Ֆօի կրօնաւորին վրայ զոր իր պաշտօնակիցներէն մէկը յանձն առած էր պաշտպանել, վասն զի Չինաստանի մէջ, այս երկիրը զոր բարբարոս կ'անուանենք, այլ ուր ամենէն խեղճը գիտէ կարդալ ու գրել, փաստաբան չկայ։ Ամբաստանեալի մը ամեն բարեկամ իրաւունք ունի անոր համար ջատագով կանգնելու։

Բայց ոչ ոք մտիկ կ'ընէր այն որ Ի-Թէի և Լիու-Սիուի անմեղութիւնն ապացու-…

…

(Շարունակելի)

Կ. ՊՈԼԻՍ, 5/17 ՆՈՅՄ. 1894

# ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՑԱՐԻՆ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

[ՀԵՌԱԳԻՐ «ԹԱՅՄԶ»Ի ՅԱՏՈՒԿ ԹՂԹԱԿՑԷՆ]

Սեւաստափոլէ Ալեքսանդր Գ.ի մարմինը բերող կառախումբը կիրակի առաւօտ Մոսքուայի Նիքոլա կայարանն հասաւ, ուր Մոսքուայի կուսակալ Սերգէյ Մեծ-դուքս, Մոսքուայի մետրապոլիտն և բարձրաստիճան կղերն հաւաքուած էին ընդունելու. Նաեւ, պահապան զօ…

…ջանար։ Թագաւորը եկեղեցականներէն ետքը կուգար հանգուցեալ Ցարին խոստովանահայրը Եանիշէվ աւագերէցն, սուրբ պատկեր մը ի ձեռին. յետոյ վերջապէս՝ սքանչելի կառքն ուր դրուած էր Կայսեր մարմինը պարունակող դագաղը։ Կառքը կը քաշէին ութ սեւապատ ուժ ձիեր, որոց մէն միոյն սանձէն բռնած էին առաջնակարգ սպայնիր։ Կառքին մէն մի անկիւնը կանգնած էր զօրապետ մը, և ուրիշ չորս զօրապետներ կառքին քովերէն կ՚երթային, ոսկեայ ծոպերը բռնած։ Զինուորական և նաւային վարժարանաց վաթսունի չափ աշնուական դասակարգի գլուատի սպայք շրջապատած էին կառքը։

ՆՈՏՐ-ՏԱՄԻ եկեղեցւոյն մէջ անցեալ կիրակի տեղի ունեցած հոգեւոր պաշտօնն ատաղէնն էր որ կը կատարուէր ոչ-կաթոլիկի մը հոգւոյն համար։ Հռոմայ Եկեղեցին չաղօթեր ոչ-կաթոլիկներու հոգւոյն համար. բայց այս անգամ քաղաքականութեան սիրոյն համար վիշուլմ՚ընելու կերպը գտնուեցաւ։ Ռուսիոյ հետ միեւնոյն ժամանակ Ֆրանսայի համար աղօթելու ձեւոյն ներքեւ, ճշմարիտ հոգեհանգիստ մ՚եղաւ հանգուցեալ Ցարին համար։ Մայր-եկեղեցին լեցուն էր։ Պ. Ք. Բէրիէ, Պ. Շ. Տիւբիւի և նախարարք ոմանք ներկայացուցիչներ ղրկած էին։ Ուրիշ կարդինալ—արքեպիսկոպոսն արտասանեց օրհնութիւնն, և ներկայք անհապաղ և չ…ն աղօթեցին Ալեքսանդր Գ.ի հոգւոյն համար։ Ի վերջ արարողութեան, կառավարութեան…

ՌՈՒՍ ԲԱՆԱԿ. — Նիքոլա Բ. հրամայեց որ այն ամեն գունդեր որոց պատուակալ պետ եղած էր իր հայր, պահեն իրենց անունները։

ԳԵՐՄԱՆԻԱ. — Քօբրիվի կոմսի հրաժարմամբ սկսուած պաշտօնական փոփոխմունք չվերջացան դեռ։ Դատական նախարար Պ. ֆոն Շէլլինկ հրաժարեցաւ, և այս առթիւ կայսրն անոր տուաւ ականակուռ աւագ պատուանշանը կարմիր Արծուի։ Պիտի յաջորդէ եղեր կայսրութեան ընդհանուր դատախազ Պ. ֆոն Թէօէնտորֆ։

## ԽՈՆԱՐՀ ԱՂԱՋԱՆՔ ՉԻՆՈՒ

### ԱՆԼՈՒՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ճարոնի նաւային և ցամաքային զօրաց նոր յաջողութիւններուն վրայ որոց շնորհիւ մինչեւ Բեքին ճամբան բացուած է իրենց առջեւ, նոր սրտայութիւն մը տիրեց Չինու կառավարական բարձր ակմբոց մէջ, և արտաքին գործոց նախարարն երկրորդ և աւելի պաշտօնական յայտարարութիւն մ՚ըրաւ դեսպաններուն Անգլիոյ, Գերմանիոյ, …

# ՆԵՐՔԻՆ

## ԼՈՒՐԵՐ

Խառն ժողովը երէկ ի նիստ գումարուեցաւ Ղալաթիոյ խորհրդարանին մէջ ընդ նախագահութեամբ Պատրիարքական Գեր. Տեղապահին և զանազան խնդրոց վրայ խորհրդակցութիւններ կատարեց։

Ազն. Յովհաննէս էֆէնտի Խաչեան ընտանեօք Եգիպտոս ուղեւորած ըլլալով, եղբայրը՝ Ազն. Մկրտիչ էֆէնտի Խաչեան առժամեայ կերպով պիտի վարէ Բերայի Պարտուց Հատուցման յանձնաժողովոյ ատենապետութիւնը։

### ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բարեյիշատակ Սերովբէ աղա Միքայէլեան և իր կողակիցը Տիկին Նուրգեկ ի կենդանութեան իրեանց 1883 ապրիլ 12 թուակիր կտակագրով մը հինգ հատ հարիւրնոց քօնսօլիտէ հաստատութեանս նուիրած ըլլալով, յիշեալ կտակագրոյն …

ԴՐԱՄԱԿԱՆ. — Ամիկց առաջ որոշուած էր որ Եէմէնի նահանգին մէջ, օտար արծաթ դրամներու գինն իջած և յետայսորիկ անոնց մուտքն արգիլուած ըլլալով, շրջաբերութեան մէջ գտնուած րէալները օսմանեան դրամներու հետ փոխանակուին և առ այդ բաւական քանակութեամբ Մէճիտիյէ ղրկուի հոն։ Այս առթիւ ըլլալիք ծախուց համար վաթսուն հազար օսմանեան ոսկի յատկացուի և այդ ծախքը վճարուի՝ հարիւրին երեսունը ելմտական գանձէն, քսանը՝ Մաքսային վերատեսչութենէն, քսաստնը հինգը հաւասար չափով՝ Հանրային Պարտուց վարչութենէն, Օսմ. Պանքայէն ու ծխախոտի Րէժիէն և հինգն ալ Թէնպէքիի Րէժիէն։ Եէմէնի ու շրջակայից կառավարական արկղերուն կողմէ իսկական արժէքով՝ 12 ղրուշի ընդունուած րէալները շրջաբերութենէ արգիլելով յանձնուին Օսմ. Պանքայի պաշտօնեից և այս վերջնոյն միջոցաւ օտար երկիրներ ղրկուին և կամ նոյնութեամբ և կամ ձուլ վիճակի մէջ սպառուին ու վաճառուին։

Արդ, ըստ նորագոյն տեղեկութեանց, …

[…]

Վեհ. Սուլթանին բարձր նախագահութեամբ Քաղաքապետութեան պաշտօնատան մէջ կազմեալ արկածելոց նպաստամատոյց յանձնաժողովը մինչեւ երէկ հետեւեալ նուէրներն ընդունած է ի նպաստ երկրաշարժէն արկածելոց։

| | Ղրշ. Փր. |
|---|---|
| Գումար նախորդ ցուցակի | 6,716,036.20 |
| Տրապիզոնի նահանգէն | 411,696 |
| Մուսուլի նահանգէն | 37,010 |
| Երուսաղեմայ գաւառէն չորրորդ անգամ | 21,147 |
| Կղզիներու գայմագամութենէն | 13,173.20 |
| Լիբանանու գաւառէն | 28,447 |
| Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեայներէն ու քարտուղարներէն | 1,850.10 |
| Ելմտական նախարարութեան պաշտօնեայներէն ու քարտուղարներէն | 15,432 |
| Մարտինի Ճէրզ գաւառակէն | 1,092 |
| Ֆրանսայի նպաստամատոյց յանձնաժողովէն չորրորդ անգամ | 76,072 |
| Շիքակօէն Տիկին Բօթէր Բալմէր | 12,027.20 |
| Շիքակօէն տասն անձեր | 36,641.10 |
| Նիւ-Եօրքի առեւտրական սենեկի անդամներէն | 45,761.10 |
| Քէօսթէնճէի վաճառականներէն Հաճի Իսմայիլ էֆէնտի | 1,134 |
| Վաճառական Թունուսցի Սալիհ Իլիաս էֆէնտի | 1,188 |
| Եաշուա Եուսուֆ Էվեատիա | 1,080 |
| Այնօրօզի վանքին միաբաններէն | 10,800 |
| Զավուշօղլը Եօրկիատի | 216 |
| Եանի Վօլթօ ու եղբարք | 540 |
| Յ. Մ. Գ. Շամտանճեան էֆէնտիք | 270.20 |
| Գումար | 7,431,794.10 |

# ՀԵՌԱԳԻՐ

## ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

